Ավետիք Իսահակյան

Ձմեռն անցավ, եկավ գարուն

Ձմեռն անցավ, եկավ գարուն,
Հալավ բարձրիկ սարերու ձուն,
Ճամփա բացվավ ղարիբներուն:
Իմ ղարիբեն խաբար չի գա.
Աչքս ճամփին՝ դադար չկա:

Ղարիբ երկիր ամպ ու մշուշ,
Իմ ղարիբի սիրտն է քրքքուշ,
Ոտ կփոխե՝ քրռա ու փուշ …
Հերիք մնա՛ս, դարձի վաթան,
Իմ ախպե՛ր ջան, ազիզ յա՛ր ջան:

Ջուրն է պրծել՝ կուգա սարեն,
Սարեն, ձորեն … իմ աչերեն …
Մի՛ նորոգիր սրտիս յարեն:
Դարձի վաթան, հողն անուշ է,
Հողն անո՞ւշ է, ջուրն անո՞ւշ է …

1902
Բասեն